

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/3**

**19 հունվարի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Գևորգ Սարգսյանի 21.12.2015թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 21.12.2015 թ-ի թիվ 6118150 ակտի դեմ:

**Ա/Ձ Գևորգ Սարգսյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Գևորգ Սարգսյանը հայտնում է, որ ք.Երևան, Կիևյան 17/20 հասցեում իրականացնում է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հավելվածով սահմանված վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն, որի գումարը կազմում է 78.750 ՀՀ դրամ: Հայտնում է նաև, որ իր գործունեության ընթացքում հարկային պարտավորությունները միշտ կատարել է պատշաճ:

Ա/Ձ Գևորգ Սարգսյանի կողմից 26.11.2015 թ-ին բանկում վճարվել է 79.000 ՀՀ դրամ դեկտեմբեր ամսվա արտոնագրային վճարի համար, որը պետք է փոխանցվեր արտոնագրային վճարի հաշվեհամարին: Սակայն, բանկի աշխատակցի անփութության պատճառով վճարված գումարը փոխանցվել է եկամտային հարկի հաշվեհամարին, այն դեպքում, երբ Ա/Ձ Գևորգ Սարգսյանը եկամտային հարկի գծով պարտավորություն չի ունեցել: Չնկատելով հաշվեհամարի սխալմունքը Ա/Ձ Գևորգ Սարգսյանը օրենքով նախատեսված կարգով արտոնագրային հայտը և վճարման անդորրագրի պատճենը 30.11.2015թ-ին փոստով ուղարկել է Արաբկիրի ՀՏ:

Արաբկիրի ՀՏ-ից 08.12.2015թ-ին ստացվել է ծանուցում այն մասին, որ ներկայացված արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը համարվում է չընդունված: Ա/Ձ Գևորգ Սարգսյանը կրկին անգամ վճարում է կատարել արտոնագրային վճարի հաշվեհամարին և օրենքով նախատեսված կարգով արտոնագրային հայտը և վճարման անդորրագրի պատճենը փոստով ուղարկել է Արաբկիրի ՀՏ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Գևորգ Սարգսյանը հավաստիացնում է, որ միշտ գործել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր լիազորությունների շրջանակում, պահպանել է օրենսդրության պահանջները և խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության Արաբկիրի ՀՏ թիվ 6118150 ստուգման ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 08.12.2015 թ-ի թիվ 6118150 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Գևորգ Սարգսյանի մոտ իրականացվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 21.12.2015 թ-ի թիվ 6118150 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 472.500 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Գևորգ Սարգսյանը ք.Երևան, Կիևյան 17/20 հասցեում իրականացնում է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 7 հավելվածով սահմանված վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն: Նշված տնտեսվարող սուբյեկտը 2015թ.-ի դեկտեմբեր ամսին իրականացրել

է վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեություն թվով 5 աշխատատեղով, որի գումարը կազմում է 78.750 դրամ: Տնտեսավարող սուբյեկտը ներկայացրել է արտոնագրի հայտ, սակայն չի կատարել համապատասխան վճարումը և չի ատացել արտոնագիր: Խախտվել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 5-րդ կետի պահանջները: Արդյունքում հիմք ընդունելով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի դրույթներն արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 472.500 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Գևորգ Սարգսյանի կողմից 26.11.2015 թ-ին Արարատքանկում վճարվել է 79.000 դրամ, որպես դեկտեմբեր ամսվա արտոնագրային վճար: Սակայն տեղի է ունեցել թյուրիմացություն և նշված գումարը փոխանցվել է եկամտային հարկի հաշվեհամարին: Ա/Ձ Գևորգ Սարգսյանը տեղյակ չլինելով տեղի ունեցած թյուրիմացության մասին, առանց վճարման անդորրագրում վճարված գումարի նպատակը հստակեցնելու, նշված անդորրագիրը և դեկտեմբեր ամսվա համար արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը մինչև գործունեության սկսելը՝ 30.11.2015 թ-ին, փոստի միջոցով ուղարկել է Արաբկիրի ՀՏ:

Արաբկիրի ՀՏ-ի կողմից, պարզելով տեղի ունեցած անճշտությունը, 03.12.2015 թ-ի գրությամբ Ա/Ձ Գևորգ Սարգսյանին տեղեկացվել է, որ արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը համարվում է չընդունված: Արաբկիրի ՀՏ 03.12.2015 թ-ի գրությունը Ա/Ձ Գևորգ Սարգսյանը ստացել է 08.12.2015 թ-ին: Արդյունքում, Ա/Ձ Գևորգ Սարգսյանը, ըստ էության, կրկին անգամ վճարել է դեկտեմբեր ամսվա արտոնագրային վճարի գումարը և արտոնագրային վճար վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության հետ միասին ներկայացրել Արաբկիրի ՀՏ:

Տվյալ դեպքում Ա/Ձ Գևորգ Սարգսյանի կողմից դեկտեմբեր ամսվա արտոնագրային վճարի գումարը եկամտային հարկի հաշվեհամարին թյուրիմացության հետևանքով փոխանցված լինելու մասին է վկայում այն հանգամանքը, որ գումարը վճարվելու օրվա դրությամբ (26.11.2015 թ-ին) Ա/Ձ Գևորգ Սարգսյանը եկամտային հարկի գծով պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև այն, որ վճարված գումարի չափը համապատասխանել է դեկտեմբեր ամսվա արտոնագրային վճարի համար նախատեսված գումարին: Ավելին, ըստ Հարկատու 3 համակարգում առկա տվյալների, 26.11.2015 թ-ի դրությամբ եկամտային հարկի գծով Ա/Ձ Գևորգ Սարգսյանի մոտ առկա է եղել 8.650 դրամի գերավճար:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Գևորգ Սարգսյանի կողմից դեկտեմբեր ամսվա արտոնագրային վճարի համար վճարված գումարը թյուրիմացության հետևանքով եկամտային հարկի հաշվեհամարին փոխանցված լինելու պայմաններում, դեկտեմբեր ամսվա արտոնագրային վճարի վճարումը չկատարելու հիմքով Ակտով լրացուցիչ պարտավորություններ, ըստ էության, չպետք է առաջադրվեին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո ղ ու մ է

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 21.12.2015 թ-ի թիվ 6118150 ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

